Հավելված
ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու
2023 թվականի մայիսի 2-ի N 65-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն թույլատրվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության Վեդի համայնքի /քաղաքային և գյուղական բնակավայրերի/ հրապարակներում, զբոսայգիներում և հարակից տարածքներում, սույն հավելվածով նախատեսված պայմանների պահպանմամբ:

2. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն սույն հավելվածի 1-ին կետում նշված վայրերում թույլատրվում է իրականացնել «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքով նախատեսված տոնական օրերին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված այլ տոնական օրերին:

3. Տեխնիկական և հատուկ նշանակության հրագործական նյութերի (արտադրանքի) օգտագործումը չի թույլատրվում ցանկացած տիպի շենքերում, շինություններում, կառույցներում, պայթյունահրդեհավտանգ օբյեկտների տարածքներում, գազատար և նավթատար խողովակաշարերի, բարձր լարման էլեկտրահաղորդալարերի մոտակա տարածքներում, տանիքներում, պատշգամբներում, բեմահարթակներում, մարզադաշտերում և այլ մարզական կառույցներում, կամուրջների վրա, տրանսպորտային մայրուղիներում, ինչպես նաև միտինգների, քայլերթերի և ցույցերի ժամանակ:

4. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության անցկացնելու վայրում չպետք է լինեն ծառեր, էլեկտրահաղորդման լարեր և այլ օդային արգելքներ:

5. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության անցկացնելու վայրի չափերը պետք է համապատասխանեն հրագործական նյութերի (արտադրանքի) վրա նշված վտանգավոր տարածքի մաքսիմալ չափերին:

6. Չի թույլատրվում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության անցկացումը ուժեղ քամու և անձրևի պայմաններում:

7. Չի թույլատրվում հրագործական նյութերի (արտադրանքի) օգտագործումը 18 տարեկանը չլրացած անձանց կողմից:

8. Չի թույլատրվում ծխել հրագործական նյութերի (արտադրանքի) մոտ:

9. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունը պետք է իրականացվի «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանմամբ:

10. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

Աշխատակազմի քարտուղար՝ Հ.Ստեփանյան